

ՕՐԱԳԻՐ

ԲԱՊԱՔԱՍԱՆ ԲԱՆԱՍՐՔԱՍԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՔԱՍԱՆ

Հ Ո Ր Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի :

Չ Ս Ի Ե Ռ Ն Ի Ա Ո Ւ Ր Ե Ն Ո 14 Յ Ո Ի Ն Վ Ա Ր 1844

Թ Ի Ի 175

ԱՌՔՐՔԱՆ ԻՌԻՔՏ

Կոստանդնուպոլիս, 10 Հունվար :

Ահա փառարքան անցած շաբաթ Քաթիկոս Նիքիայի... Բարձրատարտիլը ընդհանուր զորապետ Սիլվա փաշան, և ուրիշ գլխավոր զինուորական պաշտօնատարները...

Չինուորական զպրոցին վերադառնալ, ու իւր կիւտարու պատերազմական ժողովոյն անդամ, ի վրէժն փաշան անցած շաբաթ աս մայրաքաղաքը հասաւ...

Մասիաճառաց վերակացու (Վասապ պաշտ) Հասան էֆենտին թօփթանէ միւտիւրի անուանեցաւ...

Նկատ չորի բշարթի գիշերը՝ Վալաթիա մասիւ Վ. Մարքոսը բռնակին տունը գողեր մտնալով, զանազան արժանթիւններ ու կահ կարասիքներ վերցուցեր են...

Հինգ մեծ տէրութեանց գեսպանները ամսուս ճին ժողով մը ըրին Վնգղիոյ գեսպանին պալատը, ուրտեղ խորհուրդ եղաւ Բարձրագոյն Վարան նոր խրկած աղբարարական թուղթին վրայօք, որն որ քաղաքական կառավարութեան վերաբերեալ քանի մը հարկաւոր միջոցներուն համար է...

Նսոր անպատճառ պիտի ելլէ կրսն, նոր

ստակները, որոնք հարուր, յիսուն ու քսանը հինգ ղուաւոշնոց արծաթ դրամ պիտի ըլլան : Հաբաթ օրը տէրութեան բոլոր տոնակալ իշխանները փոխըմբռնոցը գային նոր մեքենաներուն բանելը տեսնելու համար :

Վրդարութեան պաշտօնատարութեանը վերաբերեալ գործակալներէն մէկը, ի օմէր Շէմալ էֆենտին, կառավարութեան հրամանով որոշուեցաւ, որ թուրքերը երթայ նոյն պաշտօնը կատարելու, որն որ աւաջուց թէվֆիք էֆենտին յանձնուած էր, ինչպէս որ ծանուցեր էինք. բայց ետքը Վահաբուր Վրքան հաւանութիւն չտալով, աս փոփոխութիւնը եղաւ : ի օմէր Շէմալ էֆենտին քանի մը օրէն ետքը ճամբայ պիտ' որ ելլէ պատերազմական գործերով մը :

Վրքաբիոյ մեծ գորապետ Վսեմափայլ Վամիք փաշան, աս օրերս ճամբայ պիտի ելլէ Համ երթալու համար, ուրտեղ պիտի հաստատուի Վրքաբիոյ զօրաց ընդհանուր բանակը :

Միտցեալ Վասանգացն Վմերիկայի, Կոստանդնուպոլսոյ գեսպան, մեծապատիւ Տէպնէյ Վ. Վէրքը, անցած շաբաթ գաղղիական շոգենաւով հասաւ աս մայրաքաղաքը :

Նս օրերս մաթիզ մը դանակով զարկաւ ըս պաննոց իր ընկերներէն մէկը, մասնաւոր վրէժխնդրութեան մը պատճառաւ : Ըս եղեւնագործութիւնը՝ Վալաթիա պալատը բազար ըսուած ծովեզերքը եղաւ. ուրտեղ շուտ մը վրայ հասնելով պահպան զօրքերը, բռնեցին ու բանտը տարին մարդատանը : Վալաթիայու ու Վէյոյուի մէջ աս զի պուածէն ՚ի զատ, ուրիշ երկու մարդասպանութիւն ևս եղաւ անցած շաբաթ :

Վ սեմափայլ Տիւրքեր փաշան, ամսուս Յին վախճանեցաւ իր բնական մահուամբ :

Կուտինայէն (Վէթօմաշեա) եկած գիրքերը կը ծանուցանեն թէ, մահտարածամի զիպուած մը պատահեր է յիշեալ բաղքին շրջակայ գեղի մը մէջ : Բայց կը յուսացուի թէ տղետուի հեռուանքներ չը կրնար ունենալ, որովհետեւ ան կողմի առողջութեան կառավարութիւնը իսկոյն հարկաւոր եղած զգուշութեան միջոցները գործելի դրեր է :

Վանի մը շաբաթ կայ Վնգղիոյ գեսպանատան երեւելի գործակալներէն մէկը, ըրտ Վաբիէն, երբոր իր ճամբան կերթար միամտութեամբ, նաւարանին (թէրխանէ) գործաւորներէն մէկը սկսաւ չարաչար նախատել զանիկա, ու ետքը քար մըն ալ առնելով նետեց անոր վրայ ու վիրաւորեց : Վր սեմափայլ սըր Վըրէթֆօրտ Վէնիկը աս բանը լսելով գանգատ ըրաւ Բարձրագոյն Վարանը, որ իսկոյն հրամայեց, ու յիշեալ յանցաւորը բռնել տալով թին (քիւրէկ) խրկուեցաւ անմիջապէս : Վր կառավարութիւնը արժան համարեցաւ մասնաւորապէս իմացունել Վնգղիոյ գեսպանին, թէ ո՛րքան կրցուի ըրտ Վաբիէն պատահած դժբաղդը զի պուածին վրայ, ու ասանկ անարժան գործքեր ուրիշ անգամ չպատահելու համար, նաւարանին կառավարիչ Վարահիւմ փաշան, անցած շաբաթ բոլոր գործաւորները կանչելով, Վնգղիոյ թարգման մասիւ Վըրէն Վիզանիին ներկայութեանը, յիշեալ յանցաւորին վարմանը ստատիկ դատապարտիլն ետքը, ծանոյց անանց, որ թէեւ անիկա աս անգամ ժամանակաւոր թին (քիւրէկը) խրկուեցաւ, բայց աս կէ ետքը, մէջընէն ո՛վ որ նախատելու կամ վարնելու ըլլայ, Վնգղիոյ հոլատակներէն մէկը, կամ

ըող մարդիքները : Ըսանկ մէկ ճամբորդութիւն մը ընելու համար ինչուան հիմայ խօսք ըրած ու միաբանութեամբ որոշած անձինքը հեռուեանէն են : Ըսլլալ աստղաբաշխներ, որոնք քանչելի աստղի մը կամ գիտաւոր և կամ ուրիշ աստղի մը երևումը յայտնելու կամ նախագուշակելու համար աս ճամբորդութիւնը պիտի ընեն. վասն զի քանի մը ժամանակէ ՚ի վեր բան մը չին կրնար գուշակել երկրիս վրայ : Հատ բնագետներ, որոնք մարդակերպ և ուրիշ լուսնի կենդանիներուն բնութիւնը գննելու են. ինչու որ երկրիս վրայ եղածները բաւական կը ճանչնան : Բանաստեղծներու, եղերերգուներու և առասպելաբաններու խումբ մը, որոնց միտքը, քանի մը ժամանակէն ետքը նորագիտ գաղափարներով լեցուն իրենց հայրենիքը դառնալ է. վասն զի աս ողորմելի երկրիս վրայէն շատոնցմէ սքսորուած են : Բանաստեղծները որ Պարնասու լեռան գրկուր չկրցին ելլել, լուսնի հրաբուխներուն վրայ ելլելու դիրքին ճամբաներ պիտի գտնեն : Վըրերգուները ու առասպելաբան-

ԲԱՆԱՍՐՔԱՍԱՆ

Օդադնաց կառք :

Ինչ՞ երկիր, ատ ի՞նչ վիճակի մէջ ինկեր ես : Վրու զաւրներդ որ ինչուան աս օրս այնքան սիրելին քիղի, հիմայ փորձ կը փորձեն չճանչնալ զքեզ, և ուրիշ տարերքի մը անձնատուր կը ըլլան : Ըս ասպերախտութեանը արժանի ըլլալու ի՞նչ գործելիք դուն արդեօք. ո՛չ ինչ : Բարի մօր մը պէս սիրելիք զանոնք, բայց աս հերիք չեղաւ անոնց : Հատ անգամ, ինչպէս դուն ալ կը տեսնես, մարդկանց հայրենի իշխանութենէ ապատուիլը իրենց անմտութեան ու թեթեւութեան պտուղն է : Բայց մի վախնար դուն, ինչու որ երբ անոնք օպոյին տարերքին ան սատիճան բարձրութիւնը ելլելու ըլլան նէ, որ անկէ վեր անկարելի է ելլել, ետքը կորագրուի ու զղջալով նորէն վար պիտի դառնան, վասն զի միայն օրը անոնց բաւական չէ :

Բայց աս այլաբանական մտածմունքները, առաջակայ օրգուածիս նպատակին հետ յարաբերութիւն մը չունեն.

նին. պէտք է խօսիլ օդադնաց շոգեկառքին վրայօք, որ մտ ժամանակներս օգոյին գաւառներուն մէջ ճամբորդութիւն պիտի ընէ. ան կառքին վրայօք կը սեմ, որ ներկայ դարուս մարդկանց զարմանք պիտի պատճառէ, գալիքներուն հիացում ու մեծնորներուն ապշութիւն. վասն զի բնական բան մըն է, որ ասանկ մէկ նորահնար գիտի մը համբաւը պէտք է տալնուվրայ ընել ամէնքը, ինչուան ստուերներուն խաղաղ տէրութիւնն ալ :

Հատ մարդիկ երկրագունտիս կիսնքէն ճանձրանալով, ու մարդկային խեղճութիւններէն զգուշելով, ասանկ մէկ հարկաւոր գիւտ մը մտածեցին հնարել. ու ամէնքնին միտքան հաւանութեամբ միտքերին գրին ան կառքը վարձքով բռնել, ուրիշ ալ աւելի բարեյաջող ու մաքուր գաւառ մը կը թաւալու համար. այսինքն լուսնի աշխարհքը :

Ըս ճամբորդութեան վրայ ուրիշ շատ անգամ ալ խօսուեցաւ. այլ ինչուան հիմայ տակաւին փորձ մը չեղաւ : Ինչու որ անանկ մէկ օդադնաց կառք մը պէտք էր, որ աս երկրիս դժգոհ եղող բնակիչները վերջնելով լուսնի աշխարհքը ամառի, ուրտեղ նոր եղբայրակիցներ գտնելու են. այսինքն զղկան (կեճէ գուշու) պէս ասպ-



ուրիշ բարեկամ տէրութեանցը, այսինքն թող զիտնայ, ըստ, որ իր բոլոր կեանքը թին պիտի անցունէ:

ՄԱԿԵՂՈՒՆԻՆ

Սեւանի, 31 Գեղտեմբեր:

Քիչ մնաց որ անցած շաբաթ կէս օրէն հոբելանայի հրահրութիւն մը մտնելու դարձունելու էր քաղաքիս մեծագոյն մասը: Հիւսիսային հողմը բռնունովեամբ կրփէր, երբոր զարհուրանաց արագակները, ատորձանակներու ձայները յայտնեցին, որ հրդեհ պատահեր է Ղինկէն մահաբեր ըստած փողոցին մէջ տաճկի մը տուն: Քաղաքիս ընդհանուր կառավարիչ Սէֆէմէտ Սարգիս փաշան, իր բոլոր զործակալներուն ու երեւելի անձանց հետ, փութացաւ կրակին եղած տեղը գալ, ու իր ներկայութեամբ քաջախիճով աշխատողները ու հրդեհաշիջողները, հազիւ հաղ երկու ժամէն հոբելանայի զոհուարութեամբ կրցան մտնել հրդեհէն: որ բարեբաղդաբար շատ վնաս չկրցաւ պատճառել:

Օսմանեան տէրութեան պրիք մը երէկ մեր նախահանգիստը հասաւ, յիշեցնելով:

Կոստանդնուպոլիսէն եկած շոգենաւուն հետ տաճիկ պաշտօնատար մը հասաւ հոս, ու անմիջապէս ճամբայ ելաւ Վարիսա երթալու, ուրտեղ կառավարութեան կողմէն պաշտօն մը ունի կատարելու: Յիշեալ շոգենաւով եկաւ նաև մօսիւ Յրանքիներն, որ քաղաքիս Ռուսիոյ հիւպատոսարանին թարգման ու ատենադպիրն է:

Քանի մը օրէն ի վեր, հասարակութիւնը զբաղեալ է քաղաքիս զխաւոր հրէայ սեղանաւորի մը ճակատագրութեանը վրայ: որ իր պարտուց հատուցումը զարդեցոյց հիմակահիմայ: Ըստ զժբարդ զկատուածը մեծ զգացում պատճառեց, որովհետև յիշեալ սեղանաւորին ունեցած պարտքը կը հաստատեն թէ, քանի մը միլիոն զուռուշի կը հասնին: Իրաւ է որ մեծ գումար աւելիք ալ ունի. ու սա զժբարդութիւնը կարելի է թէ, իր պարտապաններուն ժամանակին ստակ չտալէն պատճառած ըլլայ:

ԱՐՏԱՔԻՆ ԵՄԻՔԻՔ

ԼՆԳՂԻՆ

Կրօյ ըստած անգղիարէն օրագրոյն մէջ հետեւեալ յօդուածը կը կարդացուի:

«Կրնանք ծանուցանել, արժանահաստ լուրերէ խմանալով, թէ մեր գեսպանը, Մատրիտ երթալու համար զարդեցն չելած խիստ հաճելի, սպահնու վաճառները ընդունեց Գաղղիոյ կառավարութեան, Սպանիայի համար, անոր ունեցած քաղաքականութեանը վրայ: Երեւելի մէկ խնդիր մը կար՝ որուն վրայ մեր գեսպանը պարտաւորեցաւ հաստատութեամբ խօսիլ, կարգի գրուեցաւ Լնգղիոյ հաճութեանը համեմատ: Վերջապէս մօսիւ Պիւլիքիին խօսք տրուեցաւ, որ Պրէստի կոմսը մտերմաբար նպատամատոյց ըլլալու է Լնգղիոյ կառավարութեան դիտաւորութիւնները գործքի գրուելուն, Սպանիայի դործքերուն կարգադրութեանը համար»:

Չինաստանու մէջ Հոնկ Բոնկի քաղաքական կառավարութեան ատենին նախագահութիւնը ինը անգղիացի փաստաբաններու առաջարկեցին, որոնք ամէն ալ չուզեցին ընդունիլ, թէպէտև տարին 3000 լիրա սթէնլինա վարձք պիտի տրուի: Ոմանք կը հաստատեն թէ կլինային գէշութեանը ու վատաւորութեանը համար չուզէր են յանձնառու ըլլալու աս պաշտօնին. ուրիշները կրնին թէ, կառավարելու զժուարութիւնն է պատճառը. ինչու որ անգղիական օրէնքները, թէև քիչ մը փոփոխութիւն ընդունած են երկրին սովորութեանց համեմատ, զժուարութեամբ գործքի պիտի դրուին չինացի ժողովրդոց մէջ:

Հատուածներու (թօթի) տեսուչ լորտ Սթէնլիքը զիր մը խրկած է Տուպլէնի շոգենաւուց ընկերութեան կառավարչին, որուն կը ծանուցանէ թէ, քաղաքական կառավարութեան պաշտօնատարներուն հրաման եղած է, որ Տուպլէնի նախահանգիստը մտած բոլոր նաւերուն մէջ նային, թէ չըլլայ որ արդիւրած գէնք բերին: Բայց աս բանը մեծ կարգադրութեամբ պիտի ըլլայ, ու առանց նեղութիւն ու զժուարութիւն մը պատճառելու նախահանգիստին առուտուրին, ու ճամբորդներուն՝ որոնք կրնան ներս բերել ան գէնքերը միայն, որ իրենց պաշտպանու-

թեանը, կամ որտորութեան կը վերաբերին. այսու ամենայնիւ կը պարտաւորին նախահանգիստին պաշտօնատարին (օֆիսիէ) հաշուետու մարը արձանագրել տալ:

Պորտոյի դուքսը անգղապար կը պատրտի Լնգղիոյ զխաւոր տեղուանքը. զեկտեմբեր 23ին Ռուսիա երթալու է եղեր:

Մօրիսիկ Հիւրէտ օրագրոյն մէջ զեկտեմբեր 13 թուով, հետեւեալ յօդուածը գրուած է:

«Ռուսիոյ կառավարութեան արտաքին գործոց տեսուչին տղան, Կէսըլտի կոմսը, հինգշաբթի օրը Միւլար ըստած պանդուր հասաւ Բեդլիոյ կէն գալով: Կրսէն թէ խիստ հարկաւոր նամակներ բերած է Պարոն Պրէստիին (որ Ղինտայի Ռուսիոյ գեսպանն է): Ուրբաթ օրը Պարոն Պրէստիին ու Կէսըլտի կոմսը Վուինտոսը գացին»:

ԳԼԳՂԻՆ

Թագաւորին ըրած ատենաբանութիւնը խիստ համեմատ գտնուեցաւ ազգին ակնկալութեանը, ու նոյն ընդհանուր հաճութեամբ ընդունելի ըլլալու է բոլոր Գաղղիայի, ինչպէս որ ընդունուեցաւ երեսփոխաններուն (տէփուլութիւն) ժողովոյն մէջ: Կառավարութեան ազգասիրական ջանքը, իրաւոր խիստ յաջողութեամբ պատկուեցաւ: Եւ տարիներէ ի վեր ասանկ բարեբաղդ վիճակի մէջ չգտնուեցաւ Գաղղիայի խաղաղութիւնը ու մտերիմ բարեկամութիւնը օտար տէրութեանց հետ, նմանապէս բարեկարգութիւնը և յաջողութիւնը երկրին մէջ, երբէք ասանկ անասան հիմանց վրայ չհաստատուեցան: Ըստ բարեշնչող կացութիւնը առանց ծանր աշխատանայ ձեռք չբերուեցաւ. ասիկա քաջախիտ յարատեւութեան մը պտուղն է: Կրեք տարի կայ, երբոր կառավարութիւնը հիմակուան ատենակալ իշխաններուն (մինիսթր) յանձնուեցաւ, երկրին վիճակը խիստ տարբեր էր: Ընդհանուր խուլութիւն մը, ու մեծ տէրութեանց մէջ եղած ցրտութիւնը վտանգի մէջ ձգած էին Լարուպի խաղաղութիւնը, ու Գաղղիոյ յարգին քիչ մը վնաս պատճառել էին: Բայց մօսիւ Կիլոյին նախագահութեամբ հաստատուած ատենակալ իշխանաց ժողովը հոգով չափ

Ըստ կառքը բազէի (տօղան) մը ձև ունենալու է, ու կտուցին վրայ աս խօսքը գրած պիտի ըլլայ. ճանապարհ ապագայի:

Ղամբորդութիւնը սկսած ժամանակին պիտի ըլլայ ամառ ատեն արևը մարը մտնալու ատենը, ծափահարութեան, ոռնալու ու երաժշտական ձայներով. ճամբորդները ուզած հանգստութիւնին ու զբօսանքին պիտի գաննեն կառքին մէջ, բայց ստրկով խաղերը խիստ արդեւուած են: Ըստ օգային ճամբորդութեան հարեանցի ստորագրութիւնը:

(Պագար):

Վանէօր անուանեալ զաղջեարէն օրագրոյն մէջ հետեւեալ նախագրութեան արժանի դիտաւոր կը կարդացուի որ Փարիզ մէջ աս օրերս պատահեր է:

«Պուլըվար Երազիէն փողոցը թիւ 1. բարոխիսը ըստած արձարանին (որու տեղը պարոն Պուսն է,) Եկաւորաց թիւը աւելցունող մէկ երեսունը հինգ տարեկան օտարական երիտասարդ մը կար փառաւոր հագուստով, և զանազան օտար տէրութեանց պատուոյ նշաններով (տէքօրասիօն) զարդարուած, և ինքըզինքը անուանել կուտար

ներն ալ հոյակապ տեսարաններ գտնելու են, մեծ անուն ու համբաւ ստանալու համար: Ըստ ընկերութեանց մէջ զարմանալի վէճ մը պիտի ծագի. բայց երգերը, եղբերգութիւնները ու լուսնի վրայօք առասպելական պատմութիւնները միշտ նախագահութիւն պիտի ունենան:

Օրագրի երգիծարաններ, սիրտ ծակող շատախօսներ, բարոյականութեան կշռողներ, ու գիտնական երազողները աս ընտիր ու բարեկարգ խումբին ետեւէն գացողները պիտի ըլլան:

Ըստնց ետեւէն պիտի երթան նաև քանի մը բնէած օրագիր շինողներ, օրագրութեան սիրող. ասոնք ան մեծ կառքին գլուխը պիտի ըլլան, որ շուտով վար իջնան ու իսկոյն իրենց օրագրութեանցը համար նիւթ գտնեն. այսինքն վիճաբանութիւն քանի մը ջղջկանց հետ:

Թատրոնական երաժիշտներն ալ աչքաբաց վարձուորի մը (ափաղաբոս) առաջնորդութեամբ պիտի ըլլան անոնց հետ երթալու են նաև պարզամիտ դերասան կրնիկներ ու բռնաւոր դերասաններ, ամէն տեսակ երաժիշտներ, անթիւ պարերգուներ, նկարիչներ, մեքենագործներ կայն կայն, որ յարմար տեղ մը գտնելու ըլ-

լան նէ, երկնային թատրոն մը հաստատուն լուսնի մէջ:

Վլասու որ երգեցողներուն առաջին թատրոնական երգերը ազգային վարպետները պիտի շինեն: Պայմանագրերը մեկնելու ժամանակին գրելու են. թէ որ ասոնց, ու առաջնորդին մէջ խնդիր մը ծագելու ըլլայ նէ, ջղջկաներէ հաստատուած ժողովքը պիտի լուծէ զան:

Եւտ պճնասեր ու նոր սերերու ցանկացող երիտասարդներ, աս զարմանալի կառքին մէջ պիտի մտնեն, որ ետքը լուսնի աշխարհքին մէջ տարածեն իրենց նորերգները (մօտա), սիրուն արուեստներն, ծաղրական եղանակներն ու պատկերներն:

Խիստ մեծ զօրութիւն պիտի ունենան անոնք. վասն զի լուսնի մէջ եղած թեւաւոր մարդիքը իրենց սիրուհիներն են կընակաւորներն, ու անանկ սոսկալի ըզընդներով զինած են, որ խիստ աղուոր պետերն ալ կարեն ու կրփթտեն:

Եւտ պատկերհասններ նորանոր նիւթերու փափագող. շատ վաճառականներ նոր սովորութեանց, գեղարուեստներու կայն կայն, հոնտիզո հարստութիւններ պիտի գտնեն:



ՅՈՒՆԱՍՏԱՆ

Յիսուս ճգամբ աշխատելով իր պաշտօնը յաջողութեամբ կատարեց պատիւ ընելով իրեն ու բոլոր Վաղարշայի :

Թեպէտև 1840 ին սրտաստճ վտանգը անցած էր, բայց անոր հետևանքները տակաւին կրմնային այրիքն տէրութեան եկամուտները բաւական չէին կառավարութեան ծախուցը, ու օտար տէրութեանց հետ խորհրդակցութենէն հեռացած էինք: Սակայն հիմակ ամէն բան կարգի մտաւ Վաղարշայ մէջ: Կողմնականներուն խառնաշփոթ վարմունքը դադարեցաւ. հանգարտութիւնը տարահովութեամբ հաստատուեցաւ, ու ամէն մարդ սկսաւ շարունակել իր աշխատութիւնը ու գործքը. որոնք քիչ մը առեն դարձած մնային: Ազգային երեսփոխանները մեծ ուրախութեամբ իմացան թագաւորին բերնէն, որ տէրութեան եկամտից ու ծախուց մէջ հաւասարակութիւնը կատարելագոյն հաստատուած է. որուն մեծ անձկանօք կրցանկար բոլոր ազգը:

ՏԱՆԻՄԱՐԲ

Քօթնհասկէն կըզբն զեկտեմբեր 15 թիւով: «Սոսկալի ալէկոմութիւն մը պատահեցաւ աս օրերը, սհուսային յիւզմանո նահանգին մէջ, յի էլ քաղաքը: Բազմութիւ զանազան կառքեր, որ փողոցներէն կանցնէին, մանաւանդ անոնք որ մեծ մակերևոյթ մը կրնէրկայացնէին հովուն դէմ, փոթով իրկին բռնութենէն կործանուելով չարաչար խորտակուեցան:

«Նաւահանգստին ջուրերը իրենց սահմանէն դուրս ելլելով, ան աստիճան բարձրցան մինչև նոր շինուած պրիք մը, որ մօտ օրերս ծովը պիտի ձըգէին, իր տեղէն վերցնելով նաւահանգստին մէջը տարին, ու ընտեղ ծովասոյղ (պաթմիշ) եղաւ:

«Չուրերը շատ տներու ու մթերանոցներու մէջ մտան, ու գրեթէ 700 հազար Քրանքի (3 միլիոն զուռուշի չափ) արժողութեամբ վնաս պատճառուցին:

«Նստնցմէ ՚ի զատ երկու ջաղացք կայծակէն կըրակ առնելով այրեցան, ու երկու հարուր հազի չափ իրենց կեանքերնին կորուսին աս աղետալի զէպուածին մէջ»:

ասպետ Տ. Կ. . . : Բստ որում շատ ծախք կընէր և առանց հաշիւ տեսնելու կըվարէր, սրճարանին ծառաններ մեծ համարում ունէին անոր վրայ, ու շատ յարգութիւն կընէին: Մտիկա կընդունէր ասոնց բոլոր ակնածութիւնները, պզտիկոց աս յարգութիւններուն սովորածի մը պէս. միանգամայն չափազանց հարուստ աշխուականի նման կըկենցաղակարէր: Միշտ առաջին աստիճանի թատրոնները, երեւելի ու ազնուականաց պանդոկները և սրճարանները կերթար. ուրտեղումըը հասարակօրէն մեծամեծ օտարականներու հետ կըտեսնուէր, ու աս ամէն պարագաներուն մէջ մասնաւոր ակնածութեան առարկայ եղած էր ինքը: Շատ ամիսներէն ՚ի վեր քարտիսը սրճարանին տէրը, գրեթէ ամէն օր իր սրճարաններէն անօթ մը կըզգոցունէր. հրաշքով երաժի պէս, օրէ օր մէկ մէկ կտոր արծաթեղէն սրճարանէն անյայտ կըլար, իբր թէ կըհամբաւանար: Շատաներուն արթուն մնալը, հոգ տանելը աս բանին համար ընդունայն կըլար. և պարոն Պուան յուսահատութեան մէջ մնացիւր էր աս գողութեան շարունակութեանը համար և մեկուսը վրայ սլ կասկած չունէր, երբոր մէկ օր

Սահմանադրական օրէնքները կարգի գնելու համար որոշուած հոգաբարձուները, իրենց աշխատութիւնը արդէն լըմնցած ըլլալով, աղբային երեսփոխաններուն բաժնեցին նոյն գրուածքը, անոր վերջօք քննութիւն ըլլալու համար: Թագաւորական ակթուն ժառանգութեան վերաբերեալ յօդուածը, ազգին խոհական անձանց հաճութեանը համեմատ եղած չէ, ու կըհաստատեն թէ ( ) թոն թագաւորը պիտ'որ չընդունի. վասն զի գրուած է թէ, անոր ժառանգները արեւելեան եկեղեցւոյն զաւակ պէտք է ըլլան, այսինքն յունաց հաւատքը ունենան. ուստի եթէ Պավլեռայի Վօբօլտ իշխանը իր եղբօրը ( ) թոն թագաւորին յաջորդելու ըլլայ, պիտի պարտաւորի նորէն մկրտել:

Ազգային ժողովոյն մէջ սահմանադրական օրէնաց քննութեանը վրայօք խորհուրդ ըլլալով, աստեանկալ իշխանաց նախագահ, մօսիւ Մէթաքսան ըսաւ թէ, թագաւորը կրցանկայ որ քննութիւնը չսկսած, տեսնէ նոյն գրուածքը. որպէս զի քանի մը յօդուածներուն վրայօք իր կարծիքը յայտնէ: Ես առաջարկութեանը վրայ մեծ վիճաբանութիւններ եղան. մօսիւ Մէթաքսան չկրցաւ համոզել իր հակակարգները, ու մօսիւ Մալքոբօրտաթօն ալ իր զիտաւորութիւնը աս բանին վրայ յայտնապէս չձանուցանելով, վերջապէս գրեթէ չորս ժամի չափ խառնաշփոթ քննութիւններէն ետքը ժողովոյն մեծագոյն մասին հաւանութեամբ որոշուեցաւ որ մօսիւ Մէթաքսային տաւաջարկութիւնը չընդունուի:

Սահմանադրական օրէնացը համեմատաբար զրուութիւնը բոլորովին աղաւ պիտի ըլլայ. քաղաքական օրագիրները պարտաւորութիւն ունենալու չեն այսուհետեւ երաշխաւորութիւն տալու: Եստուած միայն զիտէ ինչ աղէտալի հետևանքներ պիտի ունենայ աս համարձակութիւնը առանց սանձի մը:

Բիլա Բալամիտէսին ներքին դործայ տեսչութեան պաշտօնէն զրկուելը, հասարակութեան մէկ մասին մէջ խռովութեան պատճառ եղած է: Մտեանակալ իշխաններուն ժողովը աս բանին վրայ քիչ մնաց բաժնուէրու էր. մօսիւ Մէթաքսան իր հրաժարական խնդիրը մատուցանել կուզէր, որ ետքը

ուրիշ ժողով մը հաստատէ, անոր անդամ ընելով Մալքոբօրտաթօն ու Քոլէթին. բայց ասոնք նորէն յայտնեցին իրենց զիտաւորութիւնը, թէ սահմանադրական օրէնացը վերաբերեալ գործքերէն ՚ի զատ, ուրիշ բանի մը չեն ուզէր խառնուել: Մօսիւ Բիլա Բալամիտէսը իրեն կողմնապահներուն հետ, շարունակ կաշխատի զժողովութիւններ ու շլոթութիւններ յարուցանել իրեն առջի պաշտօնակիցներուն դէմ:

Մօսիւ Քոլէթթօնին շաբաթ մը կայ որ Մէթէքսաւ, իր բարեկամները փութացան այցելութեան երթալու, ինդակից ըլլալով անոր հտ զառնալուն: Յիշեալ երեւելի անձը յայտնապէս կըհրատարակէ իր թշնամութիւնը մօսիւ Մէթաքսային դէմ, որ զինքը քարտիւ տուած էր:

Մօրայի խառնաշփոթ վիճակը միշտ կըշարունակուի. ուրտեղ մեծ անկարգութիւններ պիտ'որ պատահին եթէ ազգային երեսփոխանները, երկու աստեանկան ժողովոց հաստատուելը ընդունին: Ինչպէս որ սահմանադրական օրէնաց մէջ գրուած է: Սպառնական նամակներ անդադար կըգրուին յիշեալ երկրէն, ազգային ժողովոյն երեւելի անդամոցը, որ չըլլայ թէ հաւանութիւն տան ասանկ կարգադրութեան մը:

Յունաստանի քանի մը օրագիրներուն մէջ հետեւեալ նամակը կըկարդացուի, որն որ ազգային ժողովոյն երեւելի երեսփոխանի մը գրուած է:

Կորնթոս, 31 դեկտեմբեր 1845.

«Չեմ կրնար իմացունել ձեզի, Մօրայի բոլոր բնակիչներուն տրտմութիւնը ու յուսահատութիւնը. վասն զի աս օրերս պարտելու գացի, Բրզոս, Քալքաթաթօն և ուրիշ անդուանք: Ինչ է ասոր պատճառը արդեօք. միթէ անօթութիւնը կամ ծարաւն է, ոչ: Եստեք պզտիկ չարիք են, բաղաւորութեամբ ան յուսահատութեանը, որ կըտառապէ մեր քաղաքակիցները, որոնք անհնարին տրտմութեան մէջ մնացին, երբոր երկու աստեանկան ժողովոց հաստատութեան ցաւալի լուրը առին: Ուստի գիտցած ըլլաք որ Մօրայի բնակիչները հաստատուն մտօք որոշած են չընդունել ծերակոյտի ժողովը, թէև ազգային երեսփոխանները հաւանութիւն տուած ըլլան աս բանին: Նաև միտքերնին դրած են կրակ ձգել էրիւ ան երեսփոխաններուն տուները, որոնք հաճութիւն տարու են աս կարգադրութեանը. ու թէ որ խօսքերնին առաջ չերթայ, աղստամբութիւն պիտի հանեն:

Մօրայի ամէն մէկ գաւառին մէջ աղերսագիրեր ստորագրել կուտան հիմակ, որոնց մէջ աղբ եղած է ազգային երեսփոխաններուն հրամայական կերպիւ, որ չըլլայ թէ հաճութիւն տան ծերակոյտի ժողովոյն հաստատուելուն:

Վերս վերջ կընեմ ծանուցանելով ձեզի, որ երկու աստեանկան ժողովոց հաստատութիւնը, երկրին կործանմանը պատճառ պիտի ըլլայ»:

—Նս օրերս ( ) սմանեան տէրութեան պրիք մը Եօմէր պէյին հրամանատարութեամբը Թիբէոս հասաւ (Թէթէքի նաւահանգիստը) Մելանիկէն գալով: Կըհաստատուն թէ, աս պատերազմական նաւը յիշեալ նաւահանգիստը պիտի մնայ, օսմանեան դեսպանին հրամանին տակը: Եօմէր պէյը խիստ բարեկեցիկ մարդ մըն է, կըբնէն, մեծ ազնուականութեամբ կընդունի իրեն այցելութեան երթողները: Յիշեալ չըրամանատարը օսմանեան դեսպանին ընկերութեամբը պատիւ ունեցաւ աս օրերս Յունաստանի թագաւորին ու թագուհիին ներկայանալու, որոնք մեծ մարդասիրութեամբ ու պատուով ընդունեցին զանիկա:



ՊԱՆՈՒՅՈՒ ԿԱՒՈՒՅՈՒ

Օրհանիա, 14 Հունվար:

Տրամաբար սրտի կրպարաւորներ ծանուցանել հայոց ազգին ըրած խիստ ցաւալի ու անդալ մանկ ի կորուստը...

Հանգուցեալ մեծահասակ Պէյր, Կապուտի փոխարքային միակ մտերիմ խորհրդակցիցը ըլլալէն ՚ի զատ...

Ասեմախայլ Պօղոս պէյր, իր խոհանոցի մասին ու քաղաքակառուցեան վերաբերեալ խորին ծանօթութիւններով...

Յիշեալ զմեռնացի Ասեմախայլ Պէյրին մարմինը զմեռած, հիմակուհի մայր Աղեքսանդրիա կը մնայ:

Եզրիպտոսի Բարձրագատի փոխարքային կրտսանդնուսթոյ սեղանաւոր մեծապատիւ Արամեան Կեորք ալան:

Տաճկաստանի Լազարեան կրօնաւորներուն գլխաւոր վերատեսուց վերապատուելի մօսիւ Լ. Ե. Լէօն շաբաթ մը կայ որ հոս էր կոստանդնուպօլի սէն գալով:

Վերապատուելի մօսիւ Լ. Ե. Լէօն իրեքշաբթի օրը գաղղիական շոգենաւով կրկին կոստանդնուպօլիս դարձաւ:

Յայտնի է հասարակութեանը թէ, անցածնէրը ծանր վէճ մը սրտասհելով լծուանդի պէյրին, ու Սարտենայի հիւպատոսին մէջ, ու բարեկամօրէն հաշտութիւն ընելու հար չըլլալով, յիշեալ հիւպատոսը էլաւ Տիէնիօլ գնաց:

հիւպատոս, մօսիւ Տրեւիզին միջնորդութիւնը ընդունել էր աս վէճին համար, ու մեծ յօժարամտութիւն կը ցուցնէր...

Կարինէն դեկտեմբեր 21 թիւով կը գրեն: «Լմուս մէկէն սկսեալ ինչուան 5-6 օր ստատիկ հով ու փոթորիկ ըրաւ...»

Շարունակ երկրաշարժութեան ցնցումներ կը զգանք, երկու օրը ու շաբաթը անգամ մը բայց թեթեւ ու անվնաս են:

ԱՄԵՒՏՔԱՄԱՆ ԿԱՒՈՒՅՈՒ

ԱՆԳՂԻԱ

Ի խորբուլ, 17 Գեկտեմբեր:

Բամպակ: Միշտ կուզուի. Կամբրիպի յաջող լուրերուն պատճառաւ, գիները քիչ մը բարձրացան:

Աս շաբաթ ընդ ամէնը 43:360 պալեա ծախուեցաւ զանազան տեսակներէն, ու զուրսերէն միայն 20:479 պալեա եկաւ:

ԳՆՂՂԻԱ

Մարտիկա, 30 Գեկտեմբեր:

Բամպակ: Կրեմունքը աղէկ է, ու գիները հաստատ են. բայց ըստ որում քիչ ապրանք կայ, երևելի գործառնութիւններ չեն ըլլար:

Ոչխարի բուրդ: Քիչ առուտուր կը ըլլայ, ու գիներուն նոր փոփոխութիւն չեղաւ:

Սոսամ: Կուզուի. 45 Փրանքի հարուր քիլօկրամը դիւրաւաւաւ է:

Միտաքս: Ի ին մեծ առուտուր ըլլալուն պատճառաւ, ու ապրանքը կուզուի, ու գիները քիչ մը բարձրացան:

Կոստատ: Մէկ մաս պատրաստ ապրանք ծախուեցաւ 25 ֆրանքի հարուր քիլօկրամը:

Չէթ: Գործատունի վերաբերեալ ձէթը, աս շաբթուս առջի օրերը խիստ թուլ էր, բայց երկուանէ ՚ի վեր բարեկարգ փոփոխութիւն մը ընկաւ...

ՏԱՆԿԱՍՏԱՆ

Օրհանիա, 14 Հունվար:

Գլխաւոր տեղեկութիւններ չունինք տալու մեր առուտուրին վրայ, որ ընդհանրապէս թուրքութեան մէջ է...

Ղէհի: Քիչ մը կուզուի. տասն օրէ ՚ի վեր բաւական ապրանք ծախուեցաւ Վնդիոյ համար, 14-16 զուռու շաբաթ տեսակին:

Միտաքս: Կարգալի լուրերը յաջող են աս ապրանքին համար: Պրոսպիւրը՝ ըստ տեսակին 255-340 զուռու է թէֆէն: Պարեամպօլը՝ մետաքս խիստ քիչ կայ, հարկը թէ 5-600 օխոյ էլ է քաղաքի մէջը...

Սոսամ: Ենցած շաբթուանէ ՚ի վեր 15,000 քիլօկրամ չափ ծախուեցաւ 29-29 զուռու քիլօկրամ նաւու մէջ աւտոնդիլ պայմանով, ծախքը վաճառողին վրայ:

Փալամու: Միշտ թուլ է. Քարսուտ տեսակին գինը՝ 95-100 զուռու է. Կնդիոյ տեսակինը՝ 80:

Լիֆիօն: Միշտ թուլ է. աս շաբաթ 11 սէփիթի չափ ծախուեցաւ 75 զուռու չէֆին:

Բամպակ: Աս շաբաթ 270 պալեայի չափ ծախուեցաւ. Գընըրը՝ 185 զուռու լսանթաթը, Քրքուրը՝ 193, ու Սոպուլան՝ 205-210:

ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ

Աս օրը կը շաբաթը անգամ մը կը սպասուի, տարեկան ստորագրութեան գինը՝ 120 զուռու է կանխիկ սխէշին. իսկ գուրբի երկինքուն համար, ձմեռը ծախքը աւտոնդիլ պայմ. է. ու օր ուր կը կրնայ տարբար ըլլիլ:

- Իզլիկ օրագրութեան տպարանը:
Պօլիս Վալիտե խանը Շահարսեան Սարգիս աղային դրս:
Պրոսպիւրը Քապարձեան Մասթէս ու Գրեգոր աղային վաճա:
Աղեքսանդրիա Աղապանեան կարպետ աղային վաճա:
Դահլիշ Եղիապարեանը Մ. Աղեքսան աղային գրատունը:
Յոպակ Բրուսիոյ ու Միտաքս Նահանգաց Ալեքիկոյ հիւպատոս, Սրապիոնեան Ազգայնական գրատունը:
Թրքեստ Արեւելեան Գրեգոր աղային գրատունը:
Կարին Աղապարեանը Յարութիւն աղային վաճառատունը:
Աին Խասապեան Աղապար աղային վաճառատունը:
Էտա Պըյըբընեան աղայ Էրզրոյ գրատունը:
Պաղատտ Անդրոնյ առաջին թարգման աղայ Խաչիկին տունը:
Թիֆլիզ Ռուսաց ամբիշտաւոր Կարեանեան սրտունի Յոպար վարժարանի գրատունը:
Դուրիք Շիրմուշեան Աղապարեանց աղայ Գալուստին վա:
Թիֆլիս Աղապարեանց թարգման Խանիկ Բնակարանը:
Սոպսան Ալիբեկի աղայ Ալիբեկի վաճառատունը:
Պանոս յարի սրտունց Աղապար սրտունց և ընկերաց վաճա:
Կալիթա սրտուն Փ. Ա. Դահլիշեանի գրատունը:
Մարտոս սրտունց Սամ և ընկերաց վաճառատունը:
Սինկապօր ու Պոպուլիս յարի սրտունց Սէթ Էրզրոյ գրատունը: